ԲԱԺԻՆ 2: ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՃՅՈՒՂԵՐ
РАЗДЕЛ 2: НАУЧНЫЕ ОТРАСЛИ ПЕДАГОГИКИ
SECTION 2: SCIENTIFIC BRANCHES OF PEDAGOGY

ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՐԹՈՒԹՅԱՆԸ

Բրուտյան Վաչիկ
«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան,
Հայաստան

Համառոտ ներածական: Ժամանակակից մանկավարժական միտքն ակտիվորեն անդրադառնում է կրթության մարդաբանական բովանդակության հիմնախնդրին: Արդի փուլում կրթությունը մարդասիրական հարացույցների ձևավորման շրջանակներում ոչ միայն չի մերժում մարդաբանական հիմքը, այլև այն ավելի է դարձնում օրախնդիր: Այս ամենը պահանջում է որոշել ժամանակակից հայրենական մանկավարժության տեսության և նորարարական կրթական գործունեության խնդիրները, այդ թվում՝ մարդաբանական մոտեցման արդյունավետ կիրառումը:

Բանալի բառեր: *Մանկավարժական միտք, մարդաբանական մոտեցում, կրթություն, մանկավարժական մարդաբանություն, գիտական ըմբռնում:*

Հիմնախնդիրը: Կրթության նկատմամբ մարդաբանական մոտեցման հիմնավորման անհրաժեշտությունը մանկավարժության տեսության մեջ և պրակտիկայում:

Հիմնախնդրին առնչվող արդիական հետազոտությունների և հրատարակությունների վերլուծություն: Մանկավարժական մարդաբանությունը սկսել է զարգանալ 20-րդ դարի 90-ական թվականներից: Դեռևս 19-րդ դարի կեսերից Կ. Դ. Ուշինսկու կողմից որոշարկված մարդու հիմնախնդիրը՝ որպես դաստիարակության առարկա, ժամանակակից պայմաններում իր զարգացումն է ստանում գիտական հետազոտություններում: Առաջին այդպիսի հետազոտություններից է Բ. Մ. Բիմ-Բադի «Համաշխարհային մանկավարժության մեջ կարևորագույն հոսանքների մարդաբանական հիմքերը (20-րդ դարի առաջին կես)» աշխատությունը: 21-րդ դարասկզբին ի հայտ եկան մի շարք փիլիսոփայական աշխատություններ Ն. Վ. Կռիլովի, Օ. Մ. Լոմկոյի, Լ. Մ. Լուզինայի և այլոց կողմից:

Մանկավարժական մարդաբանության գիտական կարգավիճակի վերաբերյալ հարցի հետազոտությունը ցույց է տալիս մի քանի տեսակետների գերակշռություն. մանկավարժական մարդաբանությունը դիտարկվում է որպես ինտեգրացված գիտություն, մարդաբանական գիտակարգերի համակարգ (Վ. Վ. Կուզին, Բ. Ա. Նիկիտյուկ, Վ. Վ. Չիստյակով), որպես գիտելիքների ինտեգրացիա՝ ուղղված երեխայի ուսուցանմանը և դաստիարակությանը (Գ. Ե. Սոլովյով), որպես համակարգված գիտելիք մարդու, դաստիարակողի և դաստիարակվողի մասին (Լ. Կ. Ռախլևսկայա):

Արևմտյան գիտնականների հետազոտություններում մանկավարժական մարդաբանությունը գերազանցապես դիտարկվում է որպես գիտություն, որն ուսումնասիրում է մարդկային կեցության երևույթները կրթության համատեքստում (Կ. Դինելտ, Վ. Լոխ, Մ. Լանգևելդ, Յ. Դերբոլավ, Է. Ֆինկ և ուրիշներ):

Հոդվածի շրջանակներում իրականացվող հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է տեսականորեն հիմնավորել ժամանակակից մարդաբանական մոտեցման անհրաժեշտությունը մանկավարժական գիտության տեսության մեջ և պրակտիկայում:

Հետազոտության նորույթը: Հիմնավորվում է այն գիտական դրույթը, ըստ որի՝ մանկավարժության կողմից մարդաբանական մոտեցման որդեգրումը թույլ է տալիս նորովի նայել նորարարական կրթական պրակտիկայի ըմբռնմանը ինչպես պատմական, այդպես էլ ժամանակակից իրողությունների համատեքստում:

Հիմնական նյութի շարադրանքը: Ժամանակակից հայ հասարակության մարդասիրական զարգացումը հայրենական կրթական համակարգի առջև դնում է նոր խնդիրներ: Մանկավարժագետները վերջին տարիներին ավելի ու ավելի հաճախ են անդրադառնում Կ. Դ. Ուշինսկու մարդաբանության, Վ. Ա. Սուխոմլինսկու մարդու անհատականության, Պ. Ֆ. Լեսգաֆտի մանկավարժության և մարդաբանության կապի, Բ. Մ. Բիմ-Բադի մանկավարժական մարդաբանության առարկայի, մեթոդների և աղբյուրների վերաբերյալ գաղափարներին:

Ժամանակակից հայ մանկավարժության ժողովրդավարացումը, անհատականացումը և մյուս միտումները պահանջում են առաջնահերթ կողմնորոշվածություն դեպի մարդու պահանջմունքների բավարարումը, նրա իրավունքների և ազատությունների ապահովումը, այնպիսի ունակությունների ձևավորումը, որոնք կչեզոքացնեն սոցիալական ռիսկերը, սեփական ճակատագրի, հանրության և պետության ճակատագրի համար պատասխանատվություն ստանձնե-

լու նրա պատրաստակամությունը:

Այսօր մեր հասարակությունում տեղի են ունենում կրթության կարգավիճակի փոփոխություններ: Առանձին անձերի լուսավորության միջոցից կրթությունը փոխակերպվում է մշակույթի, հասարակության և մարդու զարգացման մեխանիզմի: Կրթության զարգացնող գործառույթը դառնում է որոշիչ. այն վերածվում է հասարակության վերարտադրման «գենետիկական ձուլամայրի», հանդես է գալիս որպես յուրաքանչյուր մարդու անձնային զարգացման ոլորտ [Слободчикова В. И., 2009, էջ 5]:

Կրթությունը պետք է ըմբռնվի և յուրացվի որպես փիլիսոփայական-մարդաբանական հատուկ հասկացություն, որն արձանագրում է մարդկային կեցության հիմունքները և մարդու մեջ մարդկայինի ձևավորման ձևերը: Կրթության մեջ մարդաբանական գաղափարների աշխարհայացքային նշանակությունը հանդես է գալիս մարդու՝ իբրև ստեղծագործ, ինքնագիտակից գոյության ըմբռնում, նրա անձի ընդունումը՝ որպես գլխավոր արժեք, առաջնայնությունը պետությունից, *կրթությունը՝ որպես մարդկային կեցության բնորոշ հատկանիշ, ոչ թե հասարակության գործառույթ:*

Կրթությունը մեր երկրում պետք է կրի արմատական փոփոխություններ, որոնք վերաբերում են ոչ միայն նրա կառուցվածքին, մեթոդաբանությանը և այդ համակարգի օղակներում կրթական գործընթացների կազմակերպման տեխնոլոգիաներին, այլև հիմնականում այն հրամայականին, ըստ որի՝ պետք է վերասահմանվեն կրթության նպատակները, նրա ռազմավարական կողմնորոշումները, տեղը հասարակական կյանքում, ինչը թույլ կտա համարժեքորեն արձագանքել 21-րդ դարի մարտահրավերներին: 21-րդ դարի կրթությունը կոչված է դառնալու կրթություն՝ բոլորի համար, միաժամանակ կրթություն՝ յուրաքանչյուրի համար. պետք է առանցքում ունենա *հոգևոր-էթիկական* գերակայությունը. այն կոչված է կրելու ստեղծագործական և նորարարական բնույթ: Պետք է խարսխվի իսկական գիտական հիմքերի վրա, պետք է լինի բազմազան՝ համապատասխան մարդկության և տվյալ երկրի մշակութային բազմազանությանը: Ներկայումս արդեն միանգամայն ակնհայտ է մարդկային քաղաքակրթության հեռանկարի կախվածությունը մարդու այն ընդունակություններից և որակներից, որոնք ձևավորվում ու կազմավորվում են կրթության մեջ [Слободчикова В. И., 2009, էջ 12]:

Կրթության նկատմամբ մարդաբանական մոտեցման հիմնավորման անհրաժեշտությունը սոցիալ-հումանիտար գիտությունների համակարգում ձևավորում է մեթոդաբանական փաստարկումների նոր կառուցվածք՝ ընդլայ-

նելով մանկավարժության կատեգորիալ-հասկացութային ապարատը՝ «մարդկային որակ», «մարդկայինը մարդու մեջ» տերմիններով: Մարդաբանական տերմինաբանության ընդարձակման հիմնախնդիրը ժամանակակից մանկավարժության մեջ քննության է արժանացել Ե. Վ. Բոնդարևսկու, Ն. Ե. Շուրկովայի, Ն. Մ. Բորիտկոյի, Լ. Մ. Լուզինայի և այլոց աշխատություններում [Малякова Н. С., Сентябрь, 2015, էջ 251]:

Դեռևս 19-րդ դարի կեսերից Կ. Դ. Ուշինսկու կողմից որոշարկված մարդու հիմնախնդիրը՝ որպես դաստիարակության առարկա, ժամանակակից պայմաններում իր զարգացումն է ստանում գիտական հետազոտություններում և մարդկային անհատականության արժեքների նոր իմաստավորումներում: Առաջին այդպիսի հետազոտություններից է Բ. Մ. Բիմ-Բադի «Համաշխարհային մանկավարժության մեջ կարևորագույն հոսանքների մարդաբանական հիմքերը (20-րդ դարի առաջին կես)» աշխատությունը: 21-րդ դարասկզբին ի հայտ եկան մի շարք փիլիսոփայական աշխատություններ մանկավարժական մարդաբանության հիմնախնդիրների վերաբերյալ: Տ. Ա. Պետրունինան ուսումնասիրում է մանկավարժական մարդաբանության գիտակարգային կարգավիճակի հիմնախնդիրը: Ն. Վ. Կոիլովան բացահայտում է մարդու կրթության տեսության կառուցվածքում մարդաբանական ավանդույթների առանձնահատկությունները: Օ. Մ. Լոմկոն տալիս է դաստիարակության՝ որպես մարդկային կեցության ընդհանրական ոլորտի ծագումնաբանության փիլիսոփայական-մարդաբանական վերլուծությունը: Դաստիարակության նկատմամբ փիլիսոփայական-մարդաբանական մոտեցումն ուսումնասիրված է նաև Լ. Մ. Լուզինայի աշխատություններում [Шуркова Н. Е., 2002]:

Մանկավարժական մարդաբանության գիտական կարգավիճակի վերաբերյալ մի շարք հետազոտություններում մանկավարժական մարդաբանությունը դիտարկվում է որպես ինտեգրացված գիտություն, մարդաբանական գիտակարգերի համակարգ (Վ. Վ. Կուզին, Բ. Ա. Նիկիտյուկ, Վ. Վ. Չիստյակով), որպես գիտելիքների ինտեգրացիա՝ ուղղված երեխայի ուսուցանմանը և դաստիարակությանը (Գ. Ե. Սոլովյով), որպես համակարգված գիտելիք մարդու, դաստիարակողի և դաստիարակվողի մասին (Լ. Կ. Ռախլևսկայա):

Արևմտյան գիտնականների հետազոտություններում մանկավարժական մարդաբանությունը գերազանցապես դիտարկվում է որպես գիտություն, որն ուսումնասիրում է մարդկային կեցության երևույթները կրթության համատեքստում: Կ. Դինելտը առանձնացնում է մարդկային կեցության հետևյալ երևույթները՝ աշխատանք, սեր, վախ, մահ, իսկ Վ. Լոխը և Մ. Լանգևելդը՝ մար-

դու կենսագրության կայացման փուլերը: Յ. Դերբոլավը և Է. Ֆինկն առանձնացնում են մարդու՝ սեփական կյանքի ինքնաիրացումը և մեկնաբանությունը [Огурцов А.П., 2002]:

Մանկավարժական-մարդաբանական մոտեցումը՝ որպես մեթոդաբանության որոշակի գիտական մակարդակ, կոչված է հիմնավորելու հետազոտական և պրակտիկ գործունեությունը, սահմանելու հասկացությունների, գաղափարների, կրթության կազմակերպման օրինաչափությունների և սկզբունքների ընտրությունը:

Մանկավարժության կողմից մարդաբանական մոտեցման որդեգրումը թույլ է տալիս նորովի նայել նորարարական կրթական պրակտիկայի ըմբռնմանը ինչպես պատմական, այդպես էլ ժամանակակից իրողությունների համատեքստում: Մարդաբանությունը դիտարկվում է որպես մարդու մասին գիտությունների համադրություն. այն տալիս է գիտական պատկերացումներ մարդու և նրա կյանքի մասին:

Ինքնաբերաբար եզրակացվում է, որ մարդաբանությունն օգտագործում է մանկավարժությունը և կատարելագործում այն: Այսինքն՝ մանկավարժության օգնությամբ մարդաբանությունն ապահովում է մարդու որակները և կրթության որակները. արդյունքում մանկավարժական մարդաբանությունը դառնում է նոր մանկավարժություն, ոչ թե սոսկ նրա մի բաժինը: Այն թույլ է տալիս որոշել մարդու ամբողջականության չափը, «մարդկայինը մարդու մեջ», որը նշանակում է հետազոտել նրա ոչ միայն բնական և հասարակական բնույթը, այլև հոգևոր կողմը՝ գիտակցության գերակայությամբ:

Ներկայումս գիտամանկավարժական բառարաններում գոյություն ունեն իմաստով իրար մերձ երկու տերմիններ՝ «մարդաբանական մոտեցում» և «մարդասիրական մոտեցում»: Լատիներեն և հունարեն այս երկու բառարմատները միևնույն նշանակությունն ունեն՝ «մարդ»: Հետևաբար նշված երկու մոտեցումների անվանումները պետք է գրեթե հոմանիշներ լինեն: Իսկապես, այդ մոտեցումներից ելնելով՝ մանկավարժության բարձրագույն արժեքի՝ երեխայի և մանկավարժական գործունեության գլխավոր նպատակի՝ երեխայի անհատականության զարգացման մասին պատկերացումները համընկնում են: Այնուամենայնիվ, «մարդաբանական մոտեցում» և «մարդասիրական մոտեցում» տերմինների գործածությունը պրակտիկայում վկայում է դրանց իմաստների որոշակի տարբերությունների մասին: Այս կապակցությամբ հետաքրքիր է վերլուծել ինչպես դրանցից յուրաքանչյուրը, այնպես էլ դրանց փոխադարձ կապը [Максакова В.И., 2019, էջ 39]:

Կարծում ենք՝ մարդասիրական մոտեցումը ենթադրում է էթիկական հայացքների համակարգ մարդու՝ որպես սոցիալական գոյության, որպես հասարակության անդամի մասին: Այն ներառում է հետևյալ դրույթները.

- բոլոր մարդիկ իրենց հիմնական իրավունքներով հավասար են,
- յուրաքանչյուր մարդ արժանի է սիրո,
- սերն անհրաժեշտ է հատկապես երեխային՝ որպես թույլ էակի, որը կարիք ունի ըմբռնման, պաշտպանության ու սատարման և այլն:

Մարդաբանական մոտեցումը մարդու՝ որպես հատուկ երևույթի նկատմամբ գիտական հայացքների համակարգ է: Այն իրականացնում է իմացության մարդաբանական սկզբունքը և թույլ է տալիս վերլուծել բոլոր մանկավարժական գործընթացները, կոնկրետ մասնագիտական գործունեությունը հարաբերակցել մարդու, երեխայի բնույթի մասին տեսական գիտելիքների հետ: Ակնհայտ է, որ մարդաբանական մոտեցումը, ըստ էության, մարդասիրական է: Այսպիսով՝ մարդասիրական մոտեցումն ավելի շուտ սկզբունք է, իսկ մարդաբանականը՝ մանկավարժական գործողությունների որոշակի համակարգի գիտական հիմնավորում, որն արդյունավետորեն նպաստում է որպես լիարժեք մարդ երեխայի զարգացմանը և ինքնորոշմանը:

Մարդաբանական մոտեցումը նկարագրվում է որոշակի աքսիոմների համակարգով, արժեբանությամբ և մանկավարժական տեխնոլոգիաներով:

Որպես մանկավարժական տեսության և կրթական պրակտիկայի մեթոդաբանական կարգավորիչ՝ մարդաբանական մոտեցման ժամանակակից գիտական ըմբռնումն ամփոփվում է հետևյալում. այն գաղափարների ամբողջական համակարգ է՝ ուղղորդված դեպի մարդը՝ որպես իմացության առարկա:

Մարդաբանական մոտեցումը հրատապ է կրթության մարդասիրական հարացույցում, մանկավարժագիտության մեջ, քանի որ մարդասիրական գիտելիքը կողմնորոշված է դեպի անհատականությունը, ուղղված է մարդու հոգևոր աշխարհին, նրա անձնային արժեքներին և կյանքի իմաստին: Տվյալ դեպքում մոտեցումը հարացույցի արտացոլումն է, իսկ հարացույցը ներառում է տեսությունը և հայեցակարգը՝ որպես տեսության միջուկ:

Եզրակացություններ, հետագա հետազոտական հեռանկարներ, առաջարկություններ: Այսպիսով՝ մարդաբանական մոտեցումն առանձին հրատապություն է ձեռք բերում ինչպես մանկավարժության տեսության մեջ (հայեցակարգային-տեսական բնագավառներ), այդպես նաև կրթական պրակտիկայում (ընթացակարգային-գործունեական բնագավառներ)՝ պայմանավորված ժամանակակից հասարակության և կրթության մարդասիրականացման խնդրի լուծման

անհրաժեշտությամբ: Մարդաբանական մոտեցումը ծառայում է որպես կրթության մեջ մարդասիրական տեխնոլոգիաների հիմնավորում, քանի որ այն մանկավարժին ուղղորդում է դեպի մարդը՝ որպես ամբողջ կրթական գործընթացի գլխավոր և հիմնական արժեք:

Օգտագործված գրականության ցանկ

1. Максакова В.И., Теория и методика воспитания младших школьников: учебник и практикум для вузов / В.И. Максакова. 2-е изд., испр. и доп. М., Издательство “Юрайт”. 2019, 206 с. (Серия: Образовательный процесс).
2. Малякова Н.С., Педагогико-антропологическое обоснование современной образовательной практики. //Электронный научно-образовательный журнал ВГСПУ “Грани познания”, N74 (41). Сентябрь 2015.
3. Огурцов А.П., Педагогическая антропология: поиски и перспективы // “Человек”, 2002. N1, с. 71-87.
4. Слободчикова В.И., Антропологическая перспектива отечественного образования. Москва-Екатеринбург. 2009, 264 с.
5. Щуркова Н.Е., Педагогическая технология. М., “Педагогическое общество России”. 2002, 224 с.

АНТРОПОЛОГИЧЕСКИЙ ПОДХОД К СОВРЕМЕННОМУ ОБРАЗОВАНИЮ

Брутян Вачик

Армяно-российский международный университет “Мхитар Гош”, Армения

Аннотация

Демократизация, индивидуализация, диалогичность и другие тенденции современного армянского образования требуют приоритетной ориентации на удовлетворение потребностей самого человека, обращенности к его правам и свободам, к формированию способности преодолевать социальные риски, брать на себя ответственность за собственную судьбу и судьбу общества и государства. Сегодня в нашем обществе происходит изменение статуса образования. Образование перестает рассматриваться как ведомственная отрасль, обслуживающая интересы других ведомств и социальных практик. В третьем тысячелетии система образования Армении должна претерпеть кардинальные изменения, которые касаются не только структуры ее организации, методологии и технологии построения образовательных процессов во всех звеньях этой системы, но, главным образом, переопределить цели образования, его стратегические ориентиры, место в общественной жизни, позволяющие адекватно отвечать на вызовы XXI века. В настоящее время уже вполне очевидна фундаментальная зависимость перспектив нашей цивилизации от тех способностей и качеств человека, которые становятся и формируются в образовании.

Современная педагогическая мысль активно обращается к проблеме антропологического содержания образования. Образование на современном этапе в рамках становления гуманитарной парадигмы не только не отвергает антропологический фундамент, но все более его актуализирует. Обращенность педагогики к антропологическому подходу позволяет по-новому взглянуть на понимание инновационной образовательной практики как в историческом контексте, так и в современной реальности. Антропологический подход как подход, направленный на социальный аспект вследствие субъект-субъектных отношений в педагогическом процессе, позволяет и ученому, и педагогу сознательно следовать ему в своей деятельности, а также его системным, адекватным современности образовательным целям, задачам и создавать условия реализации педагогического процесса. То есть антропологический подход в современной педагогике выступает методом и одновременно инструментарием для формирования целостности человека, его целостной культуры. Антропологический подход актуален в гуманитарной парадигме образования, в педагогической науке, так как гуманитарное познание ориентировано на индивидуальность, обращено к духовному миру человека, к его личностным ценностям и смыслу жизни.

ANTHROPOLOGICAL APPROACH TO MODERN EDUCATION

Vachik Brutyan

Armenian-Russian International University

after"Mkhitar Gosh", Armenia

Summary

Democratization, individualization, dialogism and other trends of modern Armenian education require priority orientation to meet the needs of the person himself, treatment to his rights and freedoms, to formation of the ability to overcome social risks, take responsibility for their own destiny and the fate of society and the state. Today the status of education in our society is being changed. Education is no longer regarded as a departmental industry serving the interests of other departments and social practices. In the third millennium, the education system of Armenia should undergo drastic changes, which concern not only to the structure of its organization, methodology and technology for constructing educational processes at all levels of this system, but mainly to redefine the goals of education, its strategic guidelines, and the place in public life that allows to adequately respond to the challenges of the 21-st century. At present, the fundamental dependence of the prospects of our civilization on those abilities and qualities of a person that are gained and formed in education, is already quite obvious. Modern pedagogical thought actively addresses the problem of the anthropological content of education. Education at the present stage in the framework of the development of the humanitarian paradigm not only does not reject the anthropological foundation, but actualizes it more and more. The treatment of pedagogy to the anthropological approach allows to have a new look at the understanding of innovative educational practice both in the historical context and in modern

reality. The anthropological approach, as an approach aimed at the social aspect as a result of subject-subject relations in the pedagogical process, allows both the scientist and teacher to consciously follow it in their activities, as well as its systematic, relevant modernity of educational goals, tasks and create conditions for the implementation of the pedagogical process. That is, the anthropological approach in modern pedagogy acts as a method and at the same time a tool for forming the integrity of a person, his holistic culture. The anthropological approach is relevant in the humanitarian paradigm of education, in pedagogical science, since humanitarian knowledge is focused on the individual, touches to a person's spiritual world, to his personal values and meaning of life.

References:

1. Maksakova V. I., "Theory and Methodology of Education of junior schoolchildren" textbook and workshop for universities/ V. I. Maksakova. 2nd edition, checked and completed. M., Publishing house "Yurait". 2019, p. 206. (Series: Educational Process).
2. Malyakova N. S., Pedagogical and anthropological substantiation of modern educational practice. // Electronic scientific and educational journal of VGSPU "The brinks of knowledge", N74 (41). September 2015.
3. Ogurtsov A. P., Pedagogical Anthropology: Search and prospects // "Person", 2002. N1, p. 71-87.
4. Slobodchikova V. I., Anthropological prospects of native education. Moscow-Yekaterinburg. 2009, p. 264.
5. Shchurkova N. Y., Pedagogical technology. M., " Pedagogical Society of Russia". 2002, p. 224.

Материал был представлен и отправлен на рецензию: 30.09.2019
Принято к публикации: 09.10.2019
Рецензент: канд. пед. наук, доцент Аревик Казарян

The material was submitted and sent to review: 30.09.2019
Was accepted for publication: 09.10.2019
Reviewer: Assoc. Prof., Ph.D. Arevik Khazaryan